

ածին փութապետ:

5 Իբրեւ գնացեալ գայր աւթեւանս երկուս, դեպ եղեւ նոցա դիպել այլ քաղաքի միոջ. եւ արտաքոյ քաղաքին վկայանոց մի սուրբ տիկնոջն Թեկղի: 6 Իբրեւ պատահեաց այնմ, էջ սփեստես, եւ իւր վանս ուներ ի ներքս ի վկայանոցի անդ. իսկ մագիստրիանոսքն ունէին վանս իւրեանց ի քաղաքին: 7 Եւ իբրեւ կերաւ հաց սփեստեսն, էարկ անկողին, եւ փակեաց գոլորս վկայանոցին. եւ ինքն ի նիստ եղեալ ի վերայ անկողնին, կամեր լինել ի կողմն. մինչ դեռ արթուն էր, աչաւք բացաւք տեսաներ, զի յանկարծ բացան դրունք վկայանոցին, եւ եղեւ ժողով մեծ բազմութեան վկայիցն, որ երեւեցան մեծապետ փառաւ: 8 Եւ ելաներ ընդ առաջ նոցա սուրբ տիկինն Թեկղես զարդարեալ մեծապայծառ, զի նշոյթ որպէս ի լուսոյ հատանէին ի նմանէն. եւ առնէին միմեանց ողջոյն, եւ ասեր ցնոսա տիկինն Թեկղ` թէ Բարի՛ եկիք, սիրելիք բարեկամք, եւ վաստակաւորք Քրիստոսի: 9 Տուեալք միմեանց ողջոյն, արկեալք զիւրաբանչիւր զարձոնսն, նստէին կարգաւ: 10 Ապա սկսանէին սուրբքն խաւսել, եւ ասէին. Սուրբքն Տեառն, որ չեւ են հրաժարեալ յերկրես, դեռ եւս աստէն ի նեղութեան են, են որք ի կապանս են. են որք ի փիւղակէս են, են որք յաքսորս, եւ են որք յայլ բռնութեան են, ի զրպարտութեան, ի հարկս եւ ի խոշտանգանս չարչարանաց: 11 Եւ մեք փութապետ ժողովեցաք, զի մի՛ անտեսութեամբ անփոյթ արասցուք նախանձախնդիր լինել Տեառն հաւատացելոց: 12 Վասն զի մանաւանդ բազում մշակք Տեառն խափանեալ կան, բազում անդք ի դերել ելին, եւ բազում այգիք խոպանացան. պարտ է մեզ զխափանիչս մշակացն զՎաղէս խափանել, զի ամենայն մշակ ի գործ իւր կանխեսցէ: 13 Եւ քաջ մշակն Բասիլիոս յիւրմէ գործոյն կայր՝ խափանեալ: 14 Արդ եկայք առաքեսցուք ի մենջ երկուս, որք երթիցեն վճարիցեն ի կենաց զչարագործն Վաղէս: 15 Ապա միում անուն էր ի Սարգիս ի նոցանէ, եւ միւսումն Թեոդորոս. արձակէին զնոսա, դնէին ժամ եւ ասէին. Ի տոյն ժամ եկեսցիք դուք եւ մեք: 16 Եւ յարուցեալ գնացին եւ մեկնեցան:

17 Եւ զայս ամենայն լուեալ սփեստեսն, որ էր վկայանոցին, եւ տեսեալ զայս տեսիլ աչաւք բացաւք, եւ կայր զարմացեալ, եւ անքուն լիներ մինչեւ յառաւաւտն զցայգն²: 18 Եւ ընդ այգս այգոյն եկին հասին մագիստրիանոսքն, եւ ասեն ցոփեստեսն. Արի գնացուք զճանապարհս: 19 Եւ խաւթապատճառս լիներ, եւ ոչ կարեր ի տեղոյն խաղալ: 20 Իբրեւ սկսան նոքա ստիպել զնա, իսկ նա թալանայր, հաներ զոգին, ոգի զոգուով ածեր, եւ ոչ կարեր բանիցն տալ պատասխանի մինչեւ յերեկոյ: 21 Ապա իբրեւ երեկոյ եղեւ, թողին զնա մագիստրիանոսքն ի վկայանոցին, եւ գնացին ի քաղաքն ի վանս իւ-

1 Օրինակ մի՛ կարի

2 Օրինակ մի՛ ցառաւտն ցայգն